

րան, որի մասին ինձ հետեւեալն է գրում: «J'ai achevé mon Dictionnaire arménien, et je l'ai chez moi, relié en deux volumes en grand fos de plus de 3000 pages, avec une préface fait longue: De Antiquitate et usu linguae Armeniacae (ստորագծումը նամակագրին է). J'y ai fait entrer beaucoup d'observations curieuses dont aucunes n'ont jamais esté dites par qui que ce soit. Si j'avais esté en Hollande, j'aurais porté cette préface avec moi pour la soumettre à votre critique.»

«Լակրոզիուս այս վերջին պարբերութիւնը նրա համար է գրում, որովհետեւ մտադրութիւն ունէր Հոլլանդա գալ եւ ինձ այցելել: Ես ի հարկէ ամենամեծ սիրով կ'ընդունէի այդպիսի մի մեծ գիտնականին:»

«Ես ինձ ուրիշ առթիւ էլ գրած է թէ՛ շնորհիւ հայերէնի կարելի է կենդանացնել Մարաց լեզուն: Այս գիտողութիւնը շատ ճիշդ է թւում ինձ. դրանից կարելի է այն եզրակացութիւնը հանել, որ հայերէնը Մարաց լեզուի յաջորդ կամ մնացորդն է, որով պէտք է ենթադրել թէ կանխապէս այդ երկիրներում մի ընդհանուր լեզու գոյութիւն ունէր:»

«Ես տեսնում եմ, որ պարոն Sperlingius իբր թէ կարդացել է Oleariusի մէջ թէ պարսիկները թուշուների ձեւով գլխատառեր ունին: Չեմ իմանում, ճիշդ է այս պարսկերէնի մասին թէ ոչ, որովհետեւ ես այդ գրքից չեմ օգտուել. բայց հաստատ գիտեմ, որ հայերը շատ ճարտար կերպով իրենց գլխատառերին մարդու օձի եւ նոյնպէս թուշուների ձեւեր են տալիս. այս երեւում է 1709 ին Շրէօգէրի Ամստերդամում տպած Thesaurus Linguae Armenicae գրքից, որի մէջ այդպիսի 30 գլխատառ կայ: Լակրոզ Շրէօգէրի այս աշխատութեան մասին էլ գրել է ինձ 1711 Մայիս 8ի նամակում եւ հետեւեալ նկատողութիւնն է անում:» J'ai enfin reçu le «Trésor de la langue arménienne», de Mr. Schroeder. J'appréhendais, qu'il ne m'eut enlevé quelqu'une de mes découvertes, mais je n'avois rien à craindre. Nous marcherons bien cent ans lui et moi sans nous rencontrer. Je ne sais comment il a pû faire pour être si sterile dans une matière si abondante. Je tacherai de mettre au net mes observations sur cette langue; plust à Dieu que je puisse disposer comme lui des caractères arméniens qu'il a eu à sa disposition à Amsterdam. Cela m'engagera peut-être à

faire un voyage, à Hollande vers la fin de cette année si Dieu me conserve la santé...»

(Հոլլանդացի նամակագիրն այնուհետեւ ուրիշ նիւթի մասին է խօսում, որն աւելորդ ենք համարում յառաջ բերել:)

Թէ որչափ իրաւացի էր Լակրոզ իր այս խիստ քննադատութեան մէջ Շրէօգէրի «Գանձ Արամեան Լեզուի» գրքի մասին, չենք կարող դատել քանի որ իր սեպհական թանգագին հեղինակութիւնը — հայ-լատին բառգիրքն, մանաւանդ նրա Յառաջաբանը, գեռ մնում է անտիպ Լէյդէնի մատենադարանում եւ մատչելի չէ բանասէրներին, որոնց համար անհրաժեշտ է նախ ծանօթանալ Լակրոզի յիշած «բազմաթիւ հետաքրքրական գիտողութիւնների» հետ: Սակայն տարակոյս չկայ, որ նրա նման լուրջ արեւելագետը՝ առանց բաւականաչափ հիմք ունենալու չէր գրի այնպիսի ծանրակշիռ նկատողութիւն, ինչպէս է «Je ne sais comment il a pu faire pour être si sterile dans une matière si abondante...»

(Շարունակելի:)

ՍԱՐԴՈՒՍԱՆ

**Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն**

**Ճ Ո Ր Ո Ւ Ի Ա Ի Ա Ջ Ա Ն Ը**

առ = առուակ: — ւ = լեռ: — ւշ = լեռնաշղթայ:

(Շարունակութիւն:)

Ը.

Թորդում:

Պարխալ գետի խառնունքից տասը կիլոմետր արեւելք ձորոտն առաջ գնալով՝ ընդունում է Թորդում վտակը, որը սկիզբն է առնում Կուշկուշլար լճից: Այս լճը է լիթալուսած են Չաուրմա, Դումլի, Կազան, Ղլթալուսի եւ Էգրիչայի լճերից. եօթն առուակ Սալախիլի եւ Էգրիչայի լճերից. եօթն առուակներ միանգամայն, միեւնոյն բարձրութիւնից ու հեռաւորութիւնից դուրս են գալիս, միառում, Թորդումի վտակի սկիզբն են կազմում: Այդ առուակները իրարից հազիւ թէ երկուական կիլոմետր հեռուից են բղխում,

ութի կիրմեար ցած իջնելով այդ բարձունքներին, միացած մտնում են Զինակեր<sup>1</sup> դեղը ոռոգելու: Թորդում գաւառը վտակի ակունքի՝ հարաւի կողմից միացած է Կարինի եւ Բասենի գաւառներին, արեւմուտքից սրան սահմանաւորում են Հովտիկ եւ Սպերի գաւառները, հիւսիսից՝ Կիսկիմի եւ Պալխարի գաւառները, իսկ արեւելքից՝ Օլթի գաւառը. սրանց մէջ ջրբաժան գիծը կազմում են Դաւրեա-Կուլիուլ, Ակասա<sup>2</sup>, Զիարէթ, Ազորդէն<sup>3</sup>, Գուլի-Բագդադ<sup>4</sup>, Ակ<sup>2</sup>, Կախիլբերգ, Ատմէկ եւ Արաւետի<sup>5</sup> լեռ-

1 Զինակեր գեղի մօտն է Զինակեր լճակը, (Զենակ) առուակի ակունքում գտնուում է մի փոքր բերդ-Զինակոր-Կալասի, կամ Քեօր-Օղի Կալասի, Լերան գաւաթներին շինուած աշխատարան բոլոր ամրոցները ամբողջ Քեօր-Օղի Կալասի է կոչում, ժողովուրդը միականուն էլ Քեօր է ասում, ինչպէս երկականի կոչին: Էթօր-Օղի Կալան մեր երկրում ընդհանրապէս աշխատարան ամրոցներն են:

2 Ակասա եւ Ակ վտակների անունները դարձեալ յիշեցնում են Ակհադեան ակ-Վեհ, փեմ բառը. որոնք սեղուք թաթարները թրքացրել են եւ շարունակ բանասցնում են — Ագ-բարա, Ագ-բուլագ, Ագ-մեղէ, Ագ-քիլսէ, Ագ-ջա-Կալա, Ագ-գոմ: Ագ = սպիտակ, անբիծ նշանակութիւնն էս ունի թաթարների լեզուով:

3 Ազորդէն աւերակները խիստ խորհրդաւոր են, անմատչելի, ինչպէս գեղը նոյնպէս եւ եայլան: Ազորդէնը արդեօք ո եւ է կապ չունի՞ Քարէայի Ազազ քաղաքի հետ:

4 Գիւլի-Բագդադ 12. արդեօք Բագրատունիների Բագինի հետ կապ չունի՞, կամ Էլամի եւ Մեդագետի Բագդադների հետ ո եւ է յարաբերութիւն չէ ունեցել: Էլամի կամ բուն Պարսկաստանի թագաւորական տան անդամները շարք մէջ Բագակերտ եւ Բագդադ նախնականները երեւում է, որ Բագրատունիների նման բագինների սպասաւորութիւնից առաջացած իշխաններ են: Գիւլի-Բագդադը Սպերից հեռու, Թորդումի գաւառում է: Արդեօք Թորդումի մէջ էս Կալուած եւ Բագիններ չեն ունեցել այդ Բագրատները: Գիւլի-Բագդադի Լ-րից ցած է գալիս, արեւմտեան լանջերից իսս կամ իսսս առկը, որը նախ ոռոգում է Օթիսա գեղը, որ ունի մեծ տաճար: Այս տաճարը նոյնպէս հեթանոսականից փոխադրած է քրիստոնէականի: Օթիսան եւ Օշիլը, Օձը, Օձուկը, Օձիւտը միեւնոյն արմատներն են, որոնք կապում են այս լեռնաշխարհ Բագրատ իշխանական-քրմական տան հետ: Իսկ իսս վտակն ու գեղը դարձեալ իր նախապատմական բերդով՝ արդեօք չի՞ յիշեցնում Կիլիկիայի Իսսուր կամ Իսսը: Կամ թէ այս իսսը Ակիտաների կամ Լարսայի արեւ Գից Իսսարին չի՞ յիշեցնում: Գիւլի-Բագդադ Լ-րի արեւելեան փեշերից իջնում է թեւ կամ Գեւ առուակը, որ նախ ոռոգում է Խարրիսա գեղը: Խարրիսա՝ Օթիսայի ձեւով կազմուած է, — թիսա վերջին փանկը ուղարկութիւն է գրաւում՝ արդեօք սա էլ նոյն աստուածութեան մի այլ պատկերը չի՞ ներկայացնում: Մանաւանդ վտակի Գեւ (թեւ) անունը ստիպում է մտածել, որ այս գետերը նախապատմական շրջանի պաշտամունքի առարկաներն են եղել:

5 Արաւետ տաանից աւելի գեղերի, վտակների, լեռների անուն է Ճորոխի Աւազանում, որ ցոյց է տալիս, թէ այդ վայրերում Արեւի յատուկ պաշտօնատեղիներ են եղել: Արաւետները մոխրապաշտութիւնից վաղ են հիմնուել մեր երկրում եւ պիտի զուգընթաց լինի կենսաստու ջրի պաշ-

ները: Կիսկիմին եւ Թորդումին բաժանում են Աշուլէն, Գերվանց, Հարկեւոր, Բէջի-դին, Մեղրբեր, Խախամին, Աղաջ-քիլսէ (Եկեղեաց) լեռները: Հովտիկն ու Թորդումը բաժանում են Կազան-Բալի լեռները: Կարնոյ եւ Թորդումի ջրբաժան գիծը Կուշկուշար եւ Դումլու լեռներն են:

Թորդում վտակի ակունքը Զինակեր դեղը հասնելուց յետոյ ուղղուում է արեւելահիւսիս, ոռոգում է Քարաւագեց (Քարընկէց), Գախիլիկ, Պոչեկց, Սաղիլ դեղերը եւ ապա հասնում է Թորդում աւանը, որը գաւառի Կասաբան է (Վարչական մարմնի ուստանը): Այս աւանում 480 տուն Իսլամ բնակութիւն կար պատերազմից առաջ, որի տնտեսականը եւ առողջութիւնը լիովին քայքայուած էր, ինչպէս կիսակործան են Թորդումի բերդերն ու ամրոցները, աշտարակները, վանքերն ու տաճարները: Բարոյապէս եւ տնտեսապէս հիւժուած այս ժողովուրդը ապրում է նախնիքներից մնացած այգիների եւ պարտէզների բերքերով, որոնք տարուց-տարի չորանում, նուազանում են ինչպէս նուազում է, չքանում բնակչութիւնը: Սեռական քրոնիկ ախտերով վարակուած, հիւժուած այս ժողովուրդը ո՛չ բժիշկ ունի, ոչ դեղագործ, ո՛չ ուսուցիչ ունի եւ ո՛չ դպրոց. սպասում է մահին կամ աշխարհալիքի Մահդի մարգարէին, որ փրկուի: Պատերազմից առաջ 23 Հայ գիւղեր կային այս գաւառում, որոնք շատ էին օգնում սրանց, արհեստներով, վիրաբուժութեամբ եւ դեղերով. բայց նրանց նպաստից էլ զրկուեցին, չնորհու իհիստի ծրագրած հայկական կոտորածներին: Հայ գիւղերում կային արհեստաւորներ, որոնք շատ չնչին վարձով լրացնում էին Իսլամների կարիքները. բայց այս օր էլ պայտոզ էլ չունին, դանակ սրող էր չկայ ամբողջ գաւառում: Երկրագործը շինարար ձեռքերի կարօտ է, ո՛չ թէ շիթայ հիւսող, այլ ճոպան ոլորող մազման էլ չեն դառնում:

Ճամբորդը Թորդում չհասած մի քանի րոպէով հանդատանում է այն Խանի մէջ, որը դարերով ծառայել է. բայց վերանորոգութեան չեն թարկուելով՝ կործանուել է:

տամունքի հետ: Արամազդը, Անահիւր եւ Միհր դե միս-ժամանակ երրորդութիւն են կազմել մեր երկրում եւ արանց պաշտամունքը Ճորոխի Աւազանի ամէն մի կողմը ակնբախ է:

քան աչքից՝ մի աչքն է մնացել, որի քայ-  
 քայուած առատաղի տակ հանգչելը կամ  
 դիչերելը ծայրահեղ վտանգաւոր է: Միջնա-  
 բերգը, պարիսպները, դղեակները թոր-  
 թումբի մէջ ախպէս են կործանուած, որ այ-  
 ցելուն հառաչում է այդ աւերակներին մօ-  
 տենալիս, թէ շատ չնչին բան է տեսնելու:  
 Բայց ախպիսի վեհութիւն ունի, որ այցե-  
 լուն կարծում է թէ՛ առաջի մի ոստան է,  
 մի իշխանական ապարանք, սակայն չքաւոր  
 բնիկները անվերջ պեղել ու խախել են հո-  
 դերը աջ ու ձախ, որեւէ հին դրամ, կնիք,  
 մատանի, դարգ, ճրագ, աշտանակ, կասկա-  
 ռայ, արձան-անդրի գտնելու յուսով. որոնք  
 անմիջապէս Եւրոպացիներին ծախել ու փող  
 են ստացել: Քանզի ու փշրել են դրամնե-  
 ները, կուրգաններն եւ գերեզմանները, իրենց  
 նախորդների հանստարանները եւ նպաստել  
 են ժամանակին աւելի արագ կատարելու իր  
 աւերածները: Սրբատաշ քարերով, կրով շա-  
 դաղուած պատերն այնքան ամուր եւ կիրը  
 քարացած է, որ շատ տեղ որմերը պահպա-  
 նել են իրենց նախնական դիրքը:

Բլբլկած որմերը, դարի վար հոսած  
 սրբատաշ քարերը, բզկտուած պարիսպները  
 բնիկների նման հողեվարքի շրջանումն են  
 սպրում: Ամէն քայլափոխի Լալա-Փաշայի  
 աւերածերն են, արուեստի եւ գիտութեան  
 այդ սխերիմ թշնամու գործերը զայրոյթ են  
 պատճառում: Բնութեան այս դրախտի մէջ  
 դարեր ու դարեր արհեստաւորն ու երկրա-  
 դործը կեանքը զարգացրել, քաղցրացրել,  
 հսկայական շէնքերով գեղեցկացրել են. իսկ  
 սոփութիւնն ու բռնակալութիւնը կործա-  
 նել ու խոպանացրել են:

Թորդում վտակը ակունքից մինչեւ գա-  
 ւառի ոստանն հասնելը աջ կողմից ընդունում  
 է Կրգըլ-Լայա, Դոււլու, Թեմիսա, Գասե-  
 բիկ, Բաբաք, Սալքմիւնէ, առ-բը. իսկ ձա-  
 խից՝ Չալուրմա, Եյրի-չայիք, Զիմակեք,  
 Կուզվանց, Խոշպեքեք, վախտիգանց, Խաշ-  
 նուտ, Նորշէն, Միգոտ եւ Կեաւկ առ-բը,  
 որոնք ոռոգում են հովանուն գեղերը, նրանց  
 ախոռները, մացրանները, եայլաները, ձմե-  
 ուանոցները, բերդերն ու ամրոցները, վան-  
 քերն ու այրերը: Այս բոլոր խրամատներն  
 ու ձորերը, լեռնային լանջերն ու ստորոտ-  
 ները, ծածկուած են եղել ընտիր անտառնե-  
 րով, բայց անխնամ մնալով՝ այժմ միայն

մացառներ ունին: Ձորերում բնակութիւն-  
 ների մօտ պարտէզներ եւ ընդարձակ ծառա-  
 տաններ շատ կան:

Թորդում գետը գէպի հիւսիս ընթանա-  
 լով՝ աջից ընդունում է Կազարիս առ-բը որ  
 ղըխում է Կանդիլ լըբից, Կարազեօղ լճակի  
 մօտից. անցնում է Ծաղկի, Բար, Կորալիք,  
 Ահար, Մոլարուքաղ, Նիխախ, Սախուն, Կա-  
 լաղիքի գեղերից, աւերակ Թուէր բերդից,  
 միանում է Թորդում վտակին, Մեղրագոմից  
 երեք կիլոմետր գէպի հիւսիս: Կազարիս  
 առ-բը աջից ընդունում է Փէք-խակ Աղասար  
 վ. եւ Ն., Լեակի, Ագրակ, Ախնաձոր առ-բը,  
 համանուն գեղերից, որոնք ոռոգում են բոլոր  
 հանդատանը մինչեւ Թորդումի միանալը.  
 ապա ձախից ընդունում է նոյնպէս Կերեսե-  
 լիք, Շիփակ, Էրքիկ, Զիրիլ առ-բը, որոնք  
 ոռոգում են համանուն գեղերը իրենց բաժա-  
 նումներով: Թորդում վտակը գէպի հիւսիս  
 ուղղուելով՝ աջից ընդունում է Քիշխա  
 դուրը, Քսիսա<sup>1</sup>, Աբերնես, Աբերնեսի դուրը,  
 Թարքար, Ընկուզէք, Ագորդ, Էշկիձոր, Օթ-  
 յա, Իսա կամ Իսա առ-բը մինչեւ Թորդում  
 լճին հասնելը, որոնք ոռոգում են համանուն  
 գեղերը իրենց բաժանումներով: Այս բոլոր  
 գեղերն ունին իրենց ամրոցները, ճարտա-  
 րագործ տաճարները. նշանաւոր են Ընկու-  
 ղէքի բերդը եւ աւերակները:

Թորդում վտակը Մեղրագոմն անցնե-  
 լուց յետոյ, ձախկողմից ընդունում է Վար-  
 չիմ, Սխտրուտ, վանք (Մեծամօր), Էգրակ,  
 Կիսիսա<sup>1</sup> (Քսիսա), Զուրմանէմ, Խայ (Հայ),

<sup>1</sup> Տարօրինակ են Թորդում ըի արեւելեան եւ ա-  
 րեւմտեան այս կրկնակի Քսիսա կամ Քիշխա գեղերը իրենց  
 հռչակաւոր դռներով մէկը հարաւում՝ արեւմտեան Քըս-  
 խայի, միւսը հիւսիսում՝ արեւելեան Քսիսայի մուտքը:  
 Ինչպէս նկատելի է, Թորդումի արեւելեան եւ արեւմտեան  
 այս կրկնակի Քսիսաները հին ժամանակներում մեծ մրցում  
 են ունեցել, որոնք արեւել են իրար գերազանցել: Զախակող-  
 մեան Քսիսան երկրորդական դիրք է գրաւել, աչակող-  
 մանը բարձր հռչակ, որին մինչեւ այսօր Քիշ ոստան են  
 անուանում բնիկները: Այս ֆիշը աւելի անտառների խորն  
 մեծածառեայտ, պղտասայով մրցած է Քսիսա գոտուը,  
 է, անտառապատ, պղտասայով մրցած է Քսիսա գոտուը,  
 նախում: Այս երկու Քսիսաների մէջ է Աբերնեսի գոտուը,  
 Աբերնես աւանը, մացրան, եւայլեան, ախոռները եւ գո-  
 Աբերնեսի արեւելեան կողմից եւ Քիշի մէջ եղած  
 մերը, որոնք ցոյց են տալիս Աբերնեսի եւ Քիշի մէջ եղած  
 մրցումը: Սրանց մօտ են ընդողբի բերդը, աւանը, Իսոսի  
 բերդն ու գեղը, Մեղրիսը եւ բազմաթիւ ուրիշ մեծա-  
 մեծ աւանների ոստանների աւերակները, գերեզմանատները,  
 զորքի մարդու պահանջ հետաքրքրում են, Թա-  
 դուլները, որոնք մարդու պահանջ հետաքրքրում են, Թա-  
 փանցել այդ հին անցեալի գարեւոր խորհրդաւոր է շէնքերի  
 եւ թումբերի տակ, որոնք կան, գտնելու նրանց գաղտ-  
 նի թումբերի տակ, որոնք կան, գտնելու նրանց գաղտ-

Մաքիմոսը եւ Գեոյ (Կասպուս) առ-ըը, որոնք անցնում են համանուն գեղերի հանդերի միջից, ոռոգում են հանդերն ու բաժանումները: Այս վտակները բղխում են Նալքեօֆեան եւ Օղեղ-Ողեկ լ-րից: Ապա ընդունում է նոյնպէս ձախից Մեծ-օղիկ կամ Ողեկ առուակը, որ բղխում է Նալթեօկան լ-րի հիւսիսային փեշերից, անցնում է Ծեգի-ձորից եւ գեղից. հարաւից-հիւսիս ուղղուած, թեքուում է արեւելք, անցնելով Բերդից, Մեծ-Բաղչայից, Պատրոնից (Իշխան), Լիարեբնից եւ Խախուից<sup>1</sup>, հասնում է Վհկայ դուռը եւ խառնուում Թորդումին: Օղեկ առ-ըը աջ կողմից ընդունում է՝ Սիլեբն առ-ըը համանուն գեղից. իսկ ձախից ընդունում է՝ Խոջեց, Բագիր, Աւուսնոս, Սրբահան. իսկ Կագան-բաշի լեռներից իջնող Զիարէթ առ-ըը, որ սկիզբն է առնում Զիարէթ լճից, Ոլուխի, սկսում է Կոնդերից (Թիբէ), Չատոֆ, Գոչուն աւերակներից, որոնք ոռոգում են Փաշա-Փագի<sup>2</sup>,

նրքը: Թորդումի այս կենդանական անմատչելի անտառները, ձորերն ու թաղարան լեռները կազմում են Գուսառի սիրտը, որի պեղումները գիտական աշխարհի առաջ պիտի Բաց անէ ճորտի Աւագանի ֆիլի հետքերը:

1 ՄԱԽՈՒ վանքի անունն ու հռչակաւոր Մեծամոր տաճարը յիշեցնում է պատմական ՄԱԽ գեղը-Լուսուորչի կալուածը: Այս գեղի իսկական անունը նոյնպէս ՄԱԽ է բայց կոչում է Մախու վանք՝ սեռական հրշակով: Այս տաճարը ոչ միայն մեծութեամբ, գմբեթով եւ գեղեցիկութեամբ անհամեմատ բարձր է Երզնկայի Խախ-ից. այլ սրա մտ գանուած լճակներն ու վիշապկան արձանները կասկած են բարձրացնում, թէ արդեօք այս լճի իսկական Խախը: Մանաւանդ Ուրուխի ձորի մշտապալար մարդերը արդեօք Անահայի նուիրուած սպիտակ արջանների եւ ձիերի արտները չեն:

2 Գոչուն եւ Զիարէթ (Չուհուրաթ) առ-րի աւուներ մտ են Փաշա-Փագի աւերակները. որոնք ճորտի աւուների Չերմես վտակի բղետած վայրից ընդ ամենը 5-կիլոմետր հեռաւորութիւն ունին եւ սրանց իրարից բաժանում է կազան-Բաշի գ-ըը: Ինչպէս ընդարձակ է բազմազան շինութիւններով Գուրէն Շէհերի աւերակները Չերմեսի, Կարագաջի աւուների մտ, նոյնը նկատելի է Փաշա-Փագում, այն տարբերութեամբ, որ Փաշա-Փագում շատ երկար իրենց գոյութիւնը պահպանել են այդ աւերակները, մինչեւ Լալա-Փաշայի խժգոնութիւնները. այն ինչ Գուրէն-Շէհերը նրանից 4-5 դար առաջ կործանուած է եղել: Երեւում է, որ Փաշա-Փագի կալուածատերերը ժամանակին ձկնահացել, յարմարուել են Սեղւոք եւ Օսմանեան վարիչների հետ, աիրել են իրենց ժառանգական կալուածներին կարելու հարկն ու տուրքը վճարելով, քաշ են տուել իրենց գոյութիւնը. իսկ Գուրէն-Շէհերը Սեղւոքների մուսթից առաջ արդէն կործանուած է եղել: Փաշա-Փագի աւերակների կոյտերը ցոյց են ապրտ, որ այս բարձունքից երկար դարեր աիրել են Թորդումի իշխանները. նոյն իսկ Ք.Պ. Ճ.Ն. անկեալ դարերում գանազան անձոնի կարկատաններ են կատարել այս շինութիւնների մէջ: Թորթումը ցոյց է ապրտ, որ նա կրօնով, սովորութիւններով միշտ կապուած է եղել Արարատեան աշ-

վերնիքար աւերակները, Էգնոց գեղը, Կոխիդ, Սրբահան, Ողեկ եայլաները, Խոսուները, մացրաները եւ կործանուած ամրոցները: Ողեկ առ-ըը ձախից՝ Սախամին եւ Մեղրբեր լեռներից իջած Էգնոց, Բուլանգ, Գորգեր, Չուանգիր, Սրբահան, Բաղչէ Մ. եւ Փ., Լիքիրին եւ Վիլիկ առ-ըն է ընդունում, որոնք համանուն գեղերը իրենց պարագաներով ոռոգելով միանում են Ողեկին եւ սպա խառնուում Թորդումին: Ողեկ ջրի Աւագանը մեծ մասամբ անտառապատ է:

Թորդում վտակը Ողեկ ջրի խառնունքից գէպի հիւսիս ուղղուելով՝ ձախ կողմից ընդունում է Ընկուգէֆ, Ջէլիա, Օշկ եւ Վանֆ առ-ըը, որոնք իջնում են Ընկուգէֆ եւ Հարկեւոր լ-րից-հիւսիս-արեւմուտքից հարաւարեւելք ուղղութեամբ եւ թափուում են Թորդում վտակը, լճի մօտերքը, ոռոգելով համանուն գեղերը իրենց բաժանմունքներով: Վանքը Ոչկին է պատկանում. գեղից երկու կիլոմետր հեռու է եւ իր ճարտարապետութեամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Տայոց աշխարհում, որի եօթը հրաշայիքներից մէկն է եւ ամենանշանաւորն է: Այս վանքից ոչ շատ հեռու կան մեծամեծ դամբարաններ մատուռի նման, որոնք այժմ թշուառ Իսլամ հասարակութեան բնակարանի են ծառայում: Թէեւ բարբարոս ձեռքերի հետ ժամանակը քայքայել ու փշրել են սքանչելի քանդակները, բայց մնացածներն էլ արդէն ապացուցանում են, որ ժամանակին ճարտարապետները ճաշակ են ունեցել, երբեք չեն ընդօրինակել, ո՛չ միայն ուրուա-

խարհի հետ, նոյն իսկ ամենազգա վիշապազանց շքանում: Վիշապազանց Արարատեան նահանգում ունեցած որձաքարէ գլանաձեւ արձանները գտնուում են այստեղ Չիարէթ (Չուհուրաթ) լճակի ափերում, Թիքմաներում (Կոնգեր) թուով շուրջ 30 հատ: Այս կարծր գլանաձեւ քարերը նորը կերպով աաշուած եւ յղիւած են որոնց վրայ քանդակուած են վիշապազանց այլ եւ այլ երեւոյթները եզի, գոմէշի, օձի, առիւծի, մոզէի եւ ուրիշ գազանների պատկերներով: Ուրուխի (Ծորակ) առ-ի աւուների այս արձաններից ջրերը իջնում են, որ գնան ոռոգեն Չատոկից մինչեւ Խաղու գեղերի հանդերը: Փաշա-Փագին կարծես չիմնել են վիշապազանց քրմերը-ջրպետները, որ հսկեն հանքի ջրերին անխափան առաջ գնալուն, նրանք պաշտպանել են Սրբահանի, Ողեկի, Անուրձորի (Կուրի-գիր) ջրանցքները, որ բաւարարեն շահութիւններին: Արդեօք այս Սրբահան գեղը, վանքը եւ ուխտատեղին որեւէ կաշուէնի՝ Բարեւական Օսմեսի առասպելի հետ, որին նկատուում են ձկան մաշկով: Արդեօք Չատոկի եւ Խախու վանքերի Մեծամոր (Ղնահիտի) պաշտամունքը, ուխտագնացութիւնը իրենց ճագումով կապուած չեն Կոնգերի (Թիքմա) արձաքարայ արձանների հետ:

դիծն ու յատակադիծը, այլ նոյն իսկ ամէն մէկը ինքնուրոյն հեղինակել եւ քանդակել են դամբարանների ներքին եւ արտաքին հիւսուածոյ քանդակները:

Թորդում լճակը հարաւ-արեւմուտքից հիւսիս-արեւելք ձգուում է մօտ 12 կիլոմետր երկարութեամբ եւ 1—1.20 կիլոմետր լայնութեամբ, ունի տեղ-տեղ մինչև 100 մետր խորութիւն: Լճակը սեղմուած է կարծր ապառաժներով, աջ կողմից թէյուն եւ ձախ կողմից Մագնուր կամ Վանուց անտառապատ եւ մացառապատ լեռներով: Աջ կողմից լիճը թափուում են աննշան առուներ, իսկ ձախ կողմից Խարսի կամ Կարսի, Խիկի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ նրանց հանգերը: Այս լճակի տակ, ասում են, գտնուում է աւերակ ամրոցներ ու բերդեր—Անի բերդ, որոնք 1791ին մնացել են ջրերի տակ թաղուած:

Ականատեսները իրենց սերնդին պատմել են, որ 1791ին մի սոսկալի երկրաշարժից Կարս գեղի Պարս լեռան վերին կատարը կործանուել եւ լցուել է թորդում վտակի հունը. ձորն ամբողջապէս ծածկել է, ջրի ընթացքը կապել: Այս լիցքը այնպէս է սղդեւ գետի հունն ու նրա ձորը, որ ջրերի ընթացքը խափանել է եւ ջուրը 12 վերստ երկարութեամբ բարձրացել ու լճացել է, տեղ-տեղ մինչև 100 մետր խորութեամբ: Ապա ջուրը այսքան բարձրանալուց յետոյ, մօտակայ մի բարձր ժայռերից թափուում է իր թեւ կամ Դեւ առուակը, որի հետ երկու կիլոմետր ճանապարհ առաջ գնալով մանում է նախկին հունը: Թորդում լճի բարձունքից այս ջրվէժը 45 մետր լայնութեամբ եւ 70 մետր բարձրութեամբ ջրերը վիժում են ապառաժների վրայ ասեղ գոչերով, իրար վրայ երեք աստիճանի ջրվէժ են կազմում մինչև թեւի խառնուելը: Ջրվէժի բարձրացած շառաչիւնը քսան կիլոմետր հեռուորութեան վրայ լսուում է: Աշխարհի ամենագեղեցիկ ջրերնկեցներից մէկն է. բայց ճանապարհների բացակայութեան եւ երկրի անմատչելութեան շնորհիւ՝ այցելուներ չունի:

Թեւ առուակին միանալով, իր նախկին հունը տեղաւորուելուց յետոյ, սրընթաց ասեղ մոնշիւններով առաջ է գնում դէպի հիւսիս. աջից ընդունում է՝ Մեշեհիկ, Ատմեկ, Երգեց, ձոզունջուր առուակները, իսկ

ձախից՝ Ուզէյն, Կիրվեց, Քարվանի, Գեմիք բերդ եւ Աշուշէն բերդի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերի հանգերը, Եայաները, ձմեռոցները, մացրաները, ախոռները, վանքերն ու աւերակ բերդերը: Ապա Թորդումը միանում է Օլթի վտակին եւ միասին ուղղուում են հիւսիս-արեւմուտք, միախառնուում ձորոսին: Թորդում վտակի կենդրոնական ճիւղը 105 վերստ երկարութիւն ունի:

Անհիւսիս: ԱՏՐՊԵՏ  
(Շարունակելի):



Մ Ա Յ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

DIRR, Prof. Dr. A., *Caucasia. Zeitschrift für die Erforschung der Sprachen und Kulturen des Kaukasus. Fast. 4. Leipzig 1927. Verlag der Asia Major. նոյն Fasc. 5. 1928.*

Caucasica իր ներկայ 4. թիւով կը բերէ մեզ երկու յօդուած—ուսումնասիրութիւն. մին՝ Դետերսի նախորդ յօդուածին (տես 1927, էջ 543) շարունակութիւնը (էջ 1—64) եւ միւսը՝ Դոկա. Դիուի «Ուրիսներու լեզուն» (էջ 65—144):

Դետերս իր ուսումնասիրութեան այս վերջին մասին մէջ կը շարունակէ հայերէնը համեմատութեան զննել հարաւային կովկասեան լեզուներու հետ՝ քննելով զատ զատ զլուսններու մէջ բաղաձայններու խումբաւորումներն ու վերածման բաւորումները (էջ 3—7), թարմաձայնաւորները (Fülllaute, այսպէս կը կոչէ այն դրերը, որոնք քանի մը բառերու մէջ երեւան կ'ելլեն, առանց ստուգարանական պատճառի. ինչպէս հայ. «գանդար» փոխառեալ բառին մէջ ն գերը, մինչ համապատասխան ասորերէնը՝ «կակկըրա»՝ չունի նոյնը) (էջ 8—13), քերականական սեռը (էջ 13—17), հնդեւրոպական հոլովման դրութեան պահպանումը (էջ 18—25), սեռական ենթաթիւնը (էջ 25—28), սեռական ենթաթիւնը (էջ 25—33), հին հայերէն — քրիստոնէական (էջ